Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 16 հունիսի 2009թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2-րդ դատական կազմը նախագահությամբ՝ Հ.Նազարյանի,՝ անդամակցությամբ՝ Վ.Պողոսյանի, Ռ.Պապայանի, քննության առնելով «Կոմուննախագիծ» ՓԲԸ դիմումի ընդունելիության հարցը

Պ Ա Ր Զ Ե Ց

«Կոմուննախագիծ» ՓԲԸ դիմել է ՀՀ սահմանադրական դատարան, վիճարկելով՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի 2-րդ մասում ամրագրված դրույթների սահմանադրականությունը:

Դիմումատուն ՀՀ վարչական դատարանում, ՀՀ Վճռաբեկ դատարանում փորձել է պաշտպանել ընկերության իրավունքները՝ սպառելով դատական պաշտպանության բոլոր միջոցները, եւ գտնում է, որ ընկերության նկատմամբ վերջնական դատական ակտով կիրառված «Հարկերի մասին» ՀՀ օրենքի վերոհիշյալ նորմերը հակասում են ՀՀ Սահմանադրության 83.5 հոդվածի 3-րդ կետի պահանջներին:

«Կոմուննախագիծ» ՓԲԸ դիմումը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27, 28 հոդվածների եւ 69 հոդվածի, ինչպես նաեւ ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի պահանջներին եւ ենթակա է քննության: Պահպանվել է նաեւ սահմանադրական դատարան դիմելու՝ օրենքով նախատեսված ժամկետը:

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածով, ՀՀ ՍԴ 2-րդ դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Կոմուննախագիծ» ՓԲԸ դիմումն ընդունել քննության, կազմել գործ, որով պատասխանող կողմ ճանաչել ՀՀ Ազգային ժողովին:

2. Նկատի ունենալով, որ դիմումում վիճարկվող նորմերի սահմանադրականության վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի 2-րդ դատական կազմի եւ դատարանի աշխատակարգային որոշումներով (համապատասխանաբար՝ 27.03.2009թ., 31.03.2009թ., ՍԴԱՈ-27) «Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանը քննության է ընդունել գործ, ա-

ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 39 հոդվածի դրույթներով, առաջարկել միավորել այդ գործերը՝ դատարանի նույն նիստում քննելու նպատակով:

Նախագահող՝ Հ.Նազարյան

Անդամներ՝ Վ.Պողոսյան

Ռ.Պապայան